

ՊԱՐԳԵՎ ԱԲԵՂԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1954 թ. մարտի 20-ին, Սումգայիթ քաղաքում (Ադրբեջանական ՍՍՀ): Ավագանի անունն է Գուրգեն:

Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1966 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան, որտեղ Պարգև աբեղան, շարունակելով իր միջնակարգ ուսումը, ավարտել է № 132 միջնակարգ մաթեմատիկական դպրոցը:

1971—1972 թթ. ուսանել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրական բաժնում:

1972 թ. ընդունվել է Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը (ռուսաց լեզվի և գրականության բաժին), որն էլ փայլուն կերպով ավարտել է 1976 թ., և իր ներկայացրած՝ Մ. Ա. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպի «Արվեստի և բարոյականության խնդիրը» թեման Մոսկվայի համամիութենական ավարտաճառերի մրցանակաբաշխությունում արժանացել է ոսկե մեդալի:

1976 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին դասավանդել է Հոկտեմբերյանի շրջանի Եղեգնուտ գյուղի դպրոցում: Նույն տարվա նոյեմբերին զորակոչվել է վինծառայության: Վերադառնալով վինծառայությունից, 1978—1980 թթ. աշխատել է թեթև արդյունաբերության մինիստրության ապդերի բաժնում:

1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ .Ներսես եպս. Պոլապալյանի, ստացել է սարկավագական աստիճան:

1984 թ. գերազանց պաշտպանելով իր ավարտաճառը՝ «Զրադաշտության արձագանքները 5-րդ դ. հայ մատենագրության մեջ և պայքարը նրա դեմ», ավարտել է ճեմարանը և նույն թվականի հունիսի 22-ից անցել է աշխատանքի Մայր Աթոռի «Գանձատանը»:

1985 թ. հունիսի 20-ից դարձել է «Գանձատան» տնօրեն:

Պարգև աբեղան իր աշխատակցությունն է բերում նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին:

1985 թ. սեպտեմբերի 8-ին, ձեռամբ Տ. Ներսես եպս. Պոլապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Պարգև աբեղան, իր անդրանիկ պատարագը մատուցելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ մեկնեց Լենինգրադի հոգևոր ճեմարանին կից ասպիրանտուրա, իր ուսումը շարունակելու: